Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի բարեկամական խմբերի գործունեության արդյունավետության բարձրացման ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՓԱԹԵԹ

Փաթեթի նպատակն է, հիմնվելով ՀՀ-ում իրականացվող սահմանադրական բարեփոխումների և խորհրդարանական կառավարման համակարգին անցման գործընթացի, «ՀՀ Ազգային Ժողովի Կանոնակարգ» օրենքի, «Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի վեցերորդ գումարման մշտական հանձնաժողովներ ստեղծելու մասին» ՀՀ ԱԺ որոշման, խորհրդարանական դիվանագիտության դերի մեծացման մտադրության (որի մասին խոսվել է դեռևս Վեցերորդ գումարման ԱԺ-ին ուղղված ՀՀ նախագահի ուղերձում), ինչպես նաև Ազգային ժողովի խորհրդի 2018 թվականի հունվարի 12–ի ԱԺԽՈ-003-Լ որոշման Հավելված 2-ի վրա («ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ»), առաջարկել որոշ քայլեր, որոնք կարող են օգնել բարեկամական խմբերի ղեկավարներին՝ Բարեկամական խմբերի (այսուհետ՝ Խմբերի) առօրյա աշխատանքի կազմակերպման, գործունեության արդյունավետության բարձրացման և խորհրդարանական դիվանագիտության մեջ դրանց դերակատարման մեծացման հարցում:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Խորհրդարանական դիվանագիտության ակտիվացման և արդյունավետության բարձրացման հիմք են ընդունվել հետևյալ սկզբունքները.

- մասնակցություն,
- նախաձեռնողականություն,
- գործընկերային կապեր,
- մշտական ընթացիկ աշխատանք,
- հաշվետվողականություն,
- համակարգում,
- անձնական պատասխանատվություն,
- շարունակականություն և հետևողականություն:

Նշված սկզբունքների և 2018թ. հունվարի 12-ին ՀՀ Ազգային Ժողովի խորհրդի կողմից ընդունված «Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի Բարեկամական Խմբերի Գործունեության Կարգի» հիման վրա ստորև առաջարկվում են Խմբերի հնարավոր գործողությունները:

Փաստաթղթում առանձնացված են հետևյալ բաժինները.

1. աշխատանքների նախնական կազմակերպում, օրակարգի մշակում,
2. ընթացիկ աշխատանքների կազմակերպում,
3. կապերի ընդլայնում,

4. տեղեկատվության տրամադրում և հետադարձ կապի ապահովում:

Որոշ կետեր կարող են կրկնվել մի քանի բաժիններում՝ ապահովելու համար բաժիններից յուրաքանչյուրի ամբողջականությունն ու լիարժեքությունը:

<u>Աշխատանքների նախնական կազմակերպում, օրակարգի մշակում</u>

Բարեկամական խմբի աշխատանքի արդյունավետության բարձրացման, համակարգվածության, ինչպես նաև երկու կողմերի փոխըմբռնման մեծացման համար կարևոր է համատեղ օրակարգի մշակումն ու դրա հետագա զարգացումը: Օրակարագի մշակման փուլը կարող է լավ հիմք ապահովել բարեկամական խմբի ներսում կառուցողական մթնոլորտի ձևավորման, ինչպես նաև դիմացի կողմի հետ կապի հաստատման ու ամրապնդման համար:

Օրակարգի մշակումը կարևոր փուլ է նաև կողմերից յուրաքանչյուրի գերակայությունների սահմանման, պետական շահերի տեսանկյունից առավել զգայուն հարցերի քննարկման և դրանց հանդեպ փոխադարձ ընդունելի դիրքորոշման հասնելու համար:

Օրակարգերի մշակման և Խմբի աշխատանքների կազմակերպման փուլում կարևոր է առաջնորդվել այն սկզբունքով, որ ՀՀ արտաքին քաղաքականության տեսանկյունից չկան անկարևոր և քիչ կարևոր երկրներ, կամ երկրներ, որոնց հետ աշխատանք տանելն ապարդյուն է: Բոլոր երկրների պարագայում օրակարգը պետք է լինի հնարավորինս հագեցած և համապատասխանող տվյալ երկրի, տարածաշրջանի, երկկողմ հարաբերությունների առանձնահատկություններին:

Օրակարգի մշակման և աշխատանքների նախնական կազմակերպման փուլում առաջարկվում են հետևյալ քայլերը.

1. Առաջին հերթին, կարևոր է ամբողջական տեղեկատվություն հավաքագրել առկա երկկողմ միջպետական, այդ թվում՝ միջխորհրդարանական հարաբերությունների, գործընկեր երկրում բարեկամական խմբի ղեկավարի և անդամների վերաբերյալ: Կարևոր է, որ խմբի անդամներն ունենան հնարավորինս ամփոփ տեղեկատվություն երկրի, արտաքին քաղաքական գերակայությունների, զգայուն հարցերի, մշակութային առանձնահատկությունների մասին և այլն:

2. ԱԺ Արտաքին կապերի վարչության միջոցով կապ հաստատել ԱԳՆ-ի հետ (ըստ անհրաժեշտության՝ չբացառելով նաև ուղղակի կապի և խորհրդակցությունների ապահովումը) և տեղեկատվություն ստանալ տվյալ երկրի հետ ՀՀ արաքին քաղաքական օրակարգի, զգայուն հարցերի վերաբերյալ: Ըստ անհրաժեշտության, բարեկամական խմբի ղեկավարի նախաձեռնությամբ կարող են անցկացվել խորհրդակցություններ ԱԳՆ համապատասխան գերատեսչության ներկայացուցիչների հետ՝ առանձին հարցերի քննարկման համար:

3. Խորհրդակցություն անցկացնել միջկառավարական հանձնաժողովի (առկայության պարագայում) ղեկավարի հետ, ծանոթանալ միջկառավարական հանձնաժողովի օրակարգին, քննարկել խորհրդարանների աջակցության հնարավորությունը: Այդ թվում՝ պայմանավորվածություն ձեռք բերել միջկառավարական հանձնաժողովների նիստերին ԱԺ բարեկամական խմբի ներկայացուցչի, ինչպես նաև՝ բարեկամական խմբերի համատեղ նիստերին՝ միջկառավարական հանձնաժողովի ներկայացուցչի մասնակցության վերաբերյալ:

4. Սփյուռքի նախարարության հետ ապահովել կայուն համագործակցություն պարբերաբար տեղեկատվություն փոխանակելու և միմյանց անհրաժեշտ հարցերում աջակցություն ցուցաբերելու նպատակով: Տեղեկատվություն ստանալ այդ երկրում գործող հայկական կառույցների, համայնքի կապերի վերաբերյալ:

5. Տարածքային կառավարման և զարգացման նախարարությունից տեղեկատվություն ստանալ առկա երկկողմ ՏԻՄ կապերի վերաբերյալ՝ դրանց զարգացումը խթանելու նպատակով:

6. Ցանկալի է խորհրդակցություններ անցկացնել Մշակույթի նախարարության հետ, քննարկել երկու երկրների օրակարգն այս ոլորտում, տեղեկատվություն ստանալ Հայաստանի և հայ ժողովրդի բարեկամ այդ երկրների ներկայացուցիչների և նրանց կապերի վերաբերյալ: Համագործակցությունը կարող է շարունակական բնույթ կրել:

7. Կապ հաստատել նաև տվյալ երկրում գործող Հայ Առաքելական Եկեղեցու Թեմի առաջնորդի հետ՝ ստանալու տեղեկատվություն տեղում ունեցած գործընկերային կապերի և ազդեցության, խնդիրների և հնարավորությունների վերաբերյալ:

8. Նամակագրական կապ հաստատել գործընկեր երկրում բարեկամական խմբի ղեկավարի հետ՝ արտահայտելով ակտիվ աշխատելու և համատեղ օրակարգ մշակելու ցանկություն:

9. Դրական արձագանքի պարագայում, պայմանավորվածություն ձեռք բերել երկու կողմերի առաջարկների հավաքագրման և համատեղ օրակարգի հաստատման ժամկետների վերաբերյալ:

10. Անցկացնել բարեկամական խմբի հայաստանյան կողմի նիստ, քննարկել օրակարգի կետերի վերաբերյալ անդամների տեսլականը, պայմանավորվել ժամկետների շուրջ, որոնց ընթացքում Խմբի անդամներից յուրաքանչյուրը կկարողանա իր առաջարկները գրավոր փոխանցել խմբի ղեկավարին:

11. Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել Հայաստանի Հանրապետության շահերին առնչվող հարցերին, դրանց վերաբերյալ մշակել

հստակ մարտավարություն և դրանք հնարավորինս ներառել օրակարգում (որոշ երկրների դեպքում՝ փոքր քայլերով):

12. Խմբի ղեկավարը ցանկալի է իրականացնի Խմբի հայաստանյան կողմի անդամներից ստացված առաջարկների համակարգումը՝ ապահովելով ոլորտային առավել լայն ծածկույթ, այդ թվում՝ անդրադառնալով առավել զգայուն և խնդրահարույց հարցերին:

13. Դիմել գործընկեր երկրում ՀՀ դեսպանին՝ խնդրելով նույնպես տրամադրել առաջարկներ օրակարգային կետերի վերաբերյալ: Դեսպանի ներգրավումը գործընթացում մի կողմից հնարավորություն կընձեռի ստանալ առավել հստակ առաջարկներ՝ ելնող առկա խնդիրներից, որոնք կարող են Երևանից տեսանելի չլինել, մյուս կողմից՝ կմեծացնի հետագայում համագործակցության շրջանակն ու արդյունավետությունը:
Ցանկալի է, որպեսզի դեսպանն իր առաջարկների մշակման փուլում խորհրդակցի տեղում հայ համայնքի ներկայացուցիչների հետ՝ ներառելով նաև նրանց առաջարկները: Համայնքին առնչվող առաջարկներ տրամադրելու խնդրանքով կարելի է դիմել նաև ՀՀ Սփյուռքի նախարարությանը:

14. Հանդիպում անցկացնել ՀՀ-ում գործընկեր երկրի դեսպանի հետ, ստեղծել բարեկամական մթնոլորտ հետագա ակտիվ շփման և համագործակցության համար, քննարկել երկկողմ հարաբերություններում խորհրդարանների հնարավոր դերակատարումը, դեսպանին նաև խնդրել առաջարկներ ներկայացնել՝ Խմբի օրակարգի համար:

15. Հանդիպում անցկացնել Հայաստանում տվյալ ազգի համայնքային կառույցի/կառույցների ղեկավարի/ղեկավարների հետ (առկայության պարագայում), ծանոթանալ նրանց խնդիրներին, քննարկել նրանց առօրյա կյանքում խորհրդարանի աջակցության հնարավորությունը: Նրանց նույնպես խնդրել առաջարկներ անել Խմբի օրակարգի համար:

16. Հավաքագրված բոլոր առաջարկների և ստացված տեղեկատվության հիման վրա մշակել Խմբի գործունեության օրակարագի հայաստանյան կողմի առաջարկը: Սկսել քննարկումներ դիմացի կողմի հետ՝ հայկական կողմի և իրենց առաջարկների հիման վրա ընդհանրական օրակարգ մշակելու նպատակով: Համատեղ օրակարգի համաձայնեցման աշխատանքները մեկնարկել Խմբի երկու կողմերի առաջիկա նիստի ընթացքում (եթե նման նիստ նախատեսվում է, հակառակ դեպքում՝ հեռակա կարգով):

17. Համատեղ օրակարգի հաստատումից հետո առավել արդյունավետ կարող է լինել Խմբի ներսում կատարել աշխատանքի որոշակի բաժանում՝ սահմանված թեմաների առաջ մղման հետ կապված:

18. Ընդհանրական օրակարգի մշակումից զատ, անհրաժեշտ է, որ բարեկամական խմբի յուրաքանչյուր նիստից/հանդիպումից առաջ սահմանվի նաև

հանդիպման հստակ օրակարգ, որում կներառվեն ընդհանրական օրակարգից առանձին կետեր:

19. Ցանկալի է Խմբի քարտուղարի միջոցով հավաքագրել ամբողջական տեղեկատվություն, թե Բարեկամական խմբի կազմում ընդգրկված գործընկեր երկրի պատգամավորներն ինչ միջխորհրդարանական կազմակերպությունների պատվիրակություններում են ընդգրկված: Այդ տեղեկատվությունը կարող է փոխանցվել համապատասխան կազմակերպություններում հայաստանյան պատվիրակության ղեկավարներին՝ անհրաժեշտության դեպքում այդ կապերն օգտագործելու նպատակով:

<u>Ընթացիկ աշխատանքների կազմակերպում</u>

Ընթացիկ աշխատանքների հիմքում պետք է լինի մշակված և հաստատված համատեղ օրակարգը, դրա առավելագույն արդյունավետ կյանքի կոչումն ու զարգացումը: Կարևոր է, որպեսզի հայկական կողմը նախաձեռնող և ակտիվ լինի շփումների և միջոցառումների կազմակերպման հարցում:

Նաև ընթացիկ աշխատանքի կարևոր բաղադրիչ է տեղեկատվության հավաքագրման ու համակարգման ապահովումը, ինչը ենթադրում է, որ Խմբի անդամներից յուրաքանչյուրը պետք է խմբի ղեկավարին մշտապես տեղյակ պահի դիմացի կողմի հետ տարբեր ձևաչափերի ներքո ունեցած իր շփումների, ստացված տեղեկատվության վերաբերյալ, իսկ ղեկավարն, իր հերթին, ապահովի այդ տեղեկատվության համակարգումն ու պահպանումը (աշխատանքների շարունակականությունն ապահովելու նպատակով):

Ընթացիկ աշխատանքի ևս մեկ կարևոր բաղադրիչ է հստակ պարբերականությամբ շփումների ապահովումն ու դիմացի կողմի հետ ջերմ հարաբերությունների խորացումը՝ նամակագրական կապի, համացանցի, այդ թվում՝ հեռատեսակապի, տոներին և առիթներին արձագանքելու, Հայաստանում կազմակերպվող տարբեր միջոցառումների ժամանակ, հնարավորության դեպքում, դիմացի կողմի գործընկերներին ներգրավելու և այլ միջոցներով:

Այս համատեքստում առաջարկվում են հետևյալ քայլերը.

1. Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել ձևաչափի շրջանակներում պատվիրակների կողմից գործընկերներին տրված խոստումների, ձեռք բերված պայմանավորվածությունների կատարմանը, ինչը բավական կարևոր է ՀՀ միջազգային հեղինակության, ինչպես նաև գործընկերներից հետագայում հնարավոր ակնկալիքներ ունենալու առումով: Սա պետք է իրականացվի Խմբի ղեկավարի համակարգմամբ:

2. Նպատակահարմար է, որ բարեկամական խմբի ձևաչափում հայկական կողմը հնարավորինս արձագանքի տվյալ երկրների կողմից(տարբեր մակարդակներով և հարթակներում) ՀՀ շահերին դեմ կամ կողմ քայլերին, հայտարարություններին և այլն: Արձագանքի հնարավորությունը պետք է դիտարկել և՛ անհատական, և՛ ընդհանուր խմբի մակարդակով (որպես վերաբերմունք երկրի նկատմամբ): Տվյալ արձագանքը յուրաքանչյուր երկրի համար պետք է լինի տարբեր՝ հաշվի առնելով նրա առանձնահատկությունները և օրակարգի առաջնահերթությունները:

3. Անհրաժեշտ է աշխատանքներ տանել, որպեսզի, հնարավորության դեպքում, Խմբի երկու կողմերը փոխադարձ կարևորության հարցերի շուրջ հանդես գան համատեղ հայտարարություններով, տարաբնույթ ակցիաներով և այլն:

4. Բարեկամական խմբերի համար անհրաժեշտ է մշակել ֆորսմաժորային իրավիճակներում(պատերազմ, բնական և տեխնածին աղետներ և այլն) համագործակցության հատուկ մեխանիզմ, որը թույլ կտա պատգամավորներին արագ արձագանքել գործընկեր երկրում տիրող իրավիճակին:

5. Ցանկալի է, որ բարեկամական խմբերն առավել ակտիվացնեն համագործակցությունը համապատասխան երկրներում ՀՀ դեսպանատների հետ՝ համագործակցության շրջանակներում երկուստեք կարևոր տեղեկատվության փոխանակումը հասցնելով ինստիտուցիոնալ մակարդակի:

6. Յուրաքանչյուր բարեկամական խումբ ցանկալի է կապ պահի տվյալ երկրում հայկական համայնքի հետ՝ նրանց հուզող հիմնական խնդիրների հստակեցման, ինչպես նաև համայնքի ունեցած կոնտակտների հավաքագրման նպատակով (այդ թվում՝ քաղաքական, գործարար, մշակութային և այլ ոլորտների հայտնի գործիչների հետ): Բարեկամական խմբի գործունեության շրջանակներում պետք է աշխատանքներ տանել՝ զարգացնելու այդ կապերը և անհրաժեշտության դեպքում դրանք ծառայեցնելու պետական շահերից բխող տարբեր խնդիրների լուծմանը:

7. Կարևոր է պարբերաբար խորհրդակցություններ անցկացնել տվյալ երկրի հետ համագործակցող հայ գործարարների հետ՝ քննարկելով նրանց աջակցելու հնարավորությունները, ինչպես նաև տեղեկատվություն ստանալով նրանց ունեցած կապերի վերաբերյալ:

8. Փոխգործակցության խորացման համար ցանկալի է երկու կողմերի խորհրդարաններում կազմակերպել գործընկեր երկրին նվիրված մշակութային միջոցառումներ՝ ներգրավելով բարեկամական խմբի պատգամավորներին(եթե նրանք որևէ առիթով այդ ժամանակ երկրում են), տվյալ երկրի դեսպանին՝

ապահովելով նաև միջոցառման լայն լուսաբանումը ԶԼՄ-ների կողմից: Միջոցառման անցկացումը խորհրդարաններում կազատի հավելյալ ծախսերից:

9. Կարևոր է, որպեսզի Խմբի անդամներն ակտիվ շփում հաստատեն նաև տվյալ երկրների պատվիրակների հետ տարբեր միջխորհրդարանական կազմակերպությունների շրջանակներում՝ անցկացնելով առանձին հանդիպումներ, քննարկելով այդ կազմակերպության ներքո երկու երկրների պատվիրակությունների համագործակցության հնարավորությունները և այլն:

10. Խմբի հայաստանյան կողմի այցերը կազմակերպվում են հետևյալ կարգով (ըստ «Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի Բարեկամական Խմբերի Գործունեության Կարգի»).

▪ Բարեկամական խմբի քարտուղարը Բարեկամական խմբի անդամներին, որպես կանոն, գործուղումից առնվազն 14 օր առաջ տրամադրում է Բարեկամական խմբի քննարկման ենթակա հարցերին առնչվող նյութեր և տեղեկանքներ:

▪ Ազգային ժողովի նախագահի կամ Բարեկամական խմբի ղեկավարի նախաձեռնությամբ Բարեկամական խմբի գործուղումից ոչ ուշ, քան երեք աշխատանքային օր առաջ հրավիրվում է աշխատանքային խորհրդակցություն՝ Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահի և Ազգային ժողովի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանման աշխատակիցների մասնակցությամբ:

▪ Աշխատանքային խորհրդակցությանը կարող են հրավիրվել արտաքին գործերի նախարարի՝ համապատասխան ուղղությունը համակարգող տեղակալը և (կամ) արտաքին գործերի նախարարության աշխատակազմի համապատասխան վարչության պետը, շահագրգիռ պետական կառավարման մարմինների ու կազմակերպությունների ներկայացուցիչներ:

▪ Գործուղվող Բարեկամական խմբի կազմը որոշում է Բարեկամական խմբի ղեկավարը՝ խորհրդակցելով Ազգային ժողովի նախագահի և Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահի հետ:

▪ Բարեկամական խմբի աշխատանքների արդյունավետությունն ապահովելու, Բարեկամական խմբի անդամների գործողությունները համակարգելու և կազմակերպական հարցերը քննարկելու նպատակով Բարեկամական խմբի ղեկավարները կազմակերպում և անցկացնում են խորհրդակցություններ: Բարեկամական խմբի ղեկավարի հանձնարարությամբ Բարեկամական խմբի խորհրդակցությունները սահմանված կարգով արձանագրվում և պահպանվում են: Բարեկամական խմբի

խորհրդակցությունների արձանագրությունը ստորագրում են նիստը վարողը և Բարեկամական խմբի քարտուղարը:

11. Բարեկամական խմբերի շրջանակներում կազմակերպվող արտերկրյա նիստերի համար ցանկալի է ունենալ մասնակցության հատուկ մեխանիզմ՝ թույլ տվող այցերում ներգրավել առավել ակտիվ անդամներին: Այդ նպատակով առաջարկվում է պահպանել տեղեկատվությունը խմբի անդամների՝ նիստերին մասնակցության, նախաձեռնողականության, ակտիվության վերաբերյալ: Համապատասխան տեղեկատվությունը պետք է հավաքագրի Խմբի ղեկավարը և, անհրաժեշտության դեպքում, ապահովի դրա հասանելիությունը Խմբի անդամների, ինչպես նաև Ազգային Ժողովի նախագահի և Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահի համար:

12. Ցանկալի է պայմանավորվածություն ձեռք բերել պետական այլ գերատեսչությունների հետ, որպեսզի Հայաստան այցելող տարբեր օտարերկրյա պատվիրակությունների կազմում ՀՀ հետ բարեկամական խմբի անդամների առկայության դեպքում կազմակերպվի նրանց հանդիպումը բարեկամական խմբի հայկական կողմի հետ:

13. Նպատակահարմար է, որ, Կարգով սահմանված ճեպազրույցներից զատ, բարեկամական խմբերը զարգացնեն հայաստանյան ԶԼՄ ներկայացուցիչների հետ շարունակական աշխատանք տանելու ավանդույթը, ինչի արդյունքում վերջիններս կանոնավոր կերպով կլուսաբանեն բարեկամական խմբի շրջանակներում իրականացվող քայլերը: Կարելի է համագործակցության մշտական ձևաչափ ունենալ մի քանի գործընկեր ԶԼՄ ներկայացուցիչների հետ, որպեսզի վերջիններս Խմբի ղեկավարի հետ գտնվեն պարբերական կապի մեջ՝ տեղեկություն ստանալով համատեղ օրակարգի իրականացման ընթացքի վերաբերյալ:

<u>Կապերի ընդլայնում</u>

Բարեկամական խմբերի կարևորագույն գործառույթներից է դիտվում կապերի ընդլայնումը, որը ենթադրում է ակտիվ համագործակցություն ոչ միայն գործընկեր պատգամավորների, այլև տվյալ երկրի հասարակության տարբեր շերտերի ներկայացուցիչների հետ: Ցանկալի է պահպանել և զարգացնել այդ շփումներն այցերի, տարբեր հարթակներում տվյալ երկրի ներկայացուցիչների հետ հանդիպումների ընթացքում և հեռակա կարգով:

Կապերի ընդլայնման և պահպանման համար առաջարկվում են հետևյալ քայլերը.

1. Կարևոր է, որ արտասահմանյան գործընկերների հետ մշտական կապ պահպանի ու խորացնի ոչ միայն Խմբի ղեկավարը, այլև բոլոր անդամները: Ուստի, կարող է իրականացվել որոշակի չափորոշիչներով «աշխատանքի բաժանում», թե դիմացի կողմից ում հետ խմբի որ անդամներն են սերտ համագործակցում: Դա կարող է պարբերաբար փոփոխության ենթարկվել:

2. Յուրաքանչյուր Խումբ անհրաժեշտ է, որ ունենա գործընկերային կապերի վերաբերյալ տվյալների բազա, որը պարբերաբար պետք է թարմացվի և հասանելի լինի բարեկամական խմբի բոլոր անդամներին:

3. Նպատակահարմար է, որ յուրաքանչյուր բարեկամական խմբի դեպքում մշակվի նաև խմբի անդամների տվյալների բազա (թե՛ ՀՀ ԱԺ բարեկամական խմբի, թե՛ գործընկեր երկրի բարեկամական խմբի), որտեղ ներառված կլինի տեղեկություն խմբի անդամների վերաբերյալ՝ օրինակ, միջազգային ինչ այլ ձևաչափերում են նրանք ընդգրկված, տեղեկություն նրանց ունեցած արտաքին կապերի մասին և այլն:

4. Ցանկալի է, որ բարեկամական խմբի անդամներն ակտիվ շփումներ հաստատեն գործընկեր երկրի պատգամավորների հետ միջազգային խորհրդարանական կազմակերպությունների շրջանակներում: Կարևոր է կազմակերպել այդ երկրի պատվիրակությունների հետ առանձին հանդիպումներ, քննարկել այդ հարթակի շրջանակներում համագործակցության հնարավորությունները, անհրաժեշտության դեպքում՝ հանդես գալ համատեղ նախաձեռնություններով և այլն:

5. Կապերի խորացման համար ցանկալի է օգտագործել բարեկամական խմբի անդամների բոլոր այցերը տվյալ երկիր՝ այդ թվում տարբեր միջոցառումների, միջազգային խորհրդարանական կազմակերպությունների նիստերին մասնակցության նպատակով: Կարևոր է նմանատիպ այցերից առաջ նախապես պայմանավորվածություն ձեռք բերել դիմացի կողմի հետ՝ բարեկամական խմբի անդամների հետ հանդիպում կազմակերպելու վերաբերյալ:

6. Ցանկալի է, որպեսզի բարեկամական խմբի անդամներն ընդլայնեն իրենց կապերը գործընկեր երկրում իրենց գաղափարակից կուսակցությունների ներկայացուցիչների հետ՝ այդ թվում բարեկամական խմբի կազմից դուրս: Այցերի ընթացքում հայկական կողմի նախաձեռնությամբ կարող են տեղի ունենալ նման հանդիպումներ, ծանոթություններ:

7. Անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր բարեկամական խումբ կանոնավոր և շարունակական աշխատանքներ տանի իր գործընկեր երկրում ԶԼՄ-ների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ կապեր

հաստատելու ուղղությամբ, որոնք պարբերաբար պետք է ընդլայնել: ԶԼՄ-ների հետ սերտ աշխատանքը հնարավորություն կընձեռի անհրաժեշտ պահին լայն տարածում ապահովել Հայաստանի պետական շահերի տեսանկյունից կարևոր մոտեցումներին, դիրքորոշումներին, ինչպես նաև հանրության շրջանում Հայաստանի վերաբերյալ դրական պատկերացում ձևավորել:

8. Անհրաժեշտ է կապեր հաստատել գործընկեր երկրի՝ հակամարտություններով, Հարավային Կովկասով, մեր արտաքին քաղաքական առաջնահերթություններով զբաղվող առավել ակտիվ փորձագետների հետ:

9. Կարևոր է կապեր հաստատել գործընկեր երկրներում ակտիվ գործարարների հետ, որոնք կարող են գործունեություն ծավալել Հայաստանում և զարգացնել հարաբերությունները հայ գործարարների հետ:

10. Անհրաժեշտ է կապեր հաստատել գործընկեր երկրի կրթական հաստատությունների հետ, որոնք թույլ կտան, օրինակ, այդ կրթական հաստատություններում դասախոսություններով հանդես գալ Հայաստանի արտաքին քաղաքականության, ՀՀ-ում տարբեր ոլորտներում արդյունավետ բարեփոխումների, Հայաստանի կողմից աշխարհին ներկայացվող բրենդերի և այլնի վերաբերյալ:

11. Կարևոր է ապահովել բոլոր շփումների, առկա և ձեռք բերվող կապերի վերաբերյալ համապատասխան տեղեկատվության հավաքագրումը Խմբի ղեկավարի մոտ, ով, իր հերթին, կիրականացնի դրանց փոխանցումն Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահին, ԱԺ Արտաքին կապերի վարչությանը՝ ապահովելու համար տվյալ երկրի հետ տարբեր հարցերի շուրջ համագործակցության անհրաժեշտության պարագայում տվյալների ամբողջական բազայի առկայությունը, և անհրաժեշտության դեպքում՝ ԱԺ նախագահին:

<u>Տեղեկատվության տրամադրում և հետադարձ կապի ապահովում</u>

Տեղեկատվության տրամադրումն ու հետադարձ կապի ապահովումը կարևոր է առկա տեղեկատվության պահպանման և Խմբի հետագա գործունեության շարունակականության ապահովման համար:

Տեղեկատվության տրամադրման համար «Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի Բարեկամական Խմբերի Գործունեության Կարգով» սահմանվում են հետևյալ դրույթները.

1. Բարեկամական խմբի ղեկավարի հանձնարարությամբ Բարեկամական խմբի խորհրդակցությունները սահմանված կարգով արձանագրվում և պահպանվում են: Բարեկամական խմբի խորհրդակցությունների արձանագրությունն ստորագրում են նիստը վարողը և Բարեկամական խմբի քարտուղարը:

2. Բարեկամական խմբերի այցերի մասին Բարեկամական խմբերի ղեկավարները գրավոր տեղեկացնում են Ազգային ժողովի նախագահին, ինչպես նաև Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովին միջոցառման անցկացման նախատեսված օրվանից ոչ ուշ, քան 21 օր առաջ: Բացառություն են կազմում նախապես չծրագրված միջոցառումները և հանդիպումները:

3. Օտարերկրյա պետություն գործուղման մեկնած Բարեկամական խումբը վերադառնալուց հետո՝ տասնօրյա ժամկետում, «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի որոշման հավելվածի 145-րդ կետով նախատեսված կարգով իրենց գործունեության վերաբերյալ գրավոր զեկույցը ներկայացնում է Ազգային ժողովի նախագահին, որն ուղարկում է Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահին:

4. Բարեկամական խմբի վերադարձից հետո Ազգային ժողովի նախագահն անհրաժեշտության դեպքում կարող է հրավիրել Բարեկամական խմբի աշխատանքային խորհրդակցություն՝ Հանձնաժողովի նախագահի մասնակցությամբ, որի ընթացքում Բարեկամական խմբի ղեկավարը հանդես է գալիս հաղորդմամբ:

5. Տեղեկատվության փոխանակման, միջազգային խորհրդարանական կազմակերպություններում համակարգված և արդյունավետ աշխատանք ապահովելու նպատակով Հանձնաժողովի նախագահը, ըստ անհրաժեշտության, հրավիրում է խորհրդակցություն՝ Բարեկամական խմբերի ղեկավարների մասնակցությամբ:

Հավելյալ առաջարկվում են նաև հետևյալ քայլերը.

1. Ցանկալի է, որպեսզի բարեկամական խմբի անդամները այցից հետո գրավոր տեղեկացնեն Խմբի ղեկավարին այցի ընթացքում իրենց կատարած աշխատանքի, եղած շփումների, ձեռք բերած կապերի մասին, որպեսզի ղեկավարն, իր հերթին, համակարգի ստացված տեղեկատվությունը և կարողանա վերոնշյալ սահմանված կարգով գրավոր զեկույց ներկայացնել Ազգային Ժողովի նախագահին:

2. Ցանկալի է, որ տարբեր ձևաչափերում տվյալ երկրի ներկայացուցիչների հետ շփումների արդյունքում ձեռք բերված գործընկերային կապերի վերաբերյալ տեղեկությունը ևս Խմբի անդամները գրավոր կերպով փոխանցեն Խմբի ղեկավարին, որպեսզի վերջինս կարողանա հարկ եղած դեպքում փոխանցել դրանք ԱԺ նախագահին, Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահին:

3. Ցանկալի է, որպեսզի Խմբի ղեկավարը որոշակի պարբերականությամբ տեղեկատվություն ներկայացնի Ազգային Ժողովի նախագահին և Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահին՝ այդ ընթացքում կատարված աշխատանքի, եղած շփումների և ստացված տեղեկատվության վերաբերյալ:

4. Ցանկալի է պարբերաբար անցկացնել ՀՀ ԱԺ բարեկամական խմբերի ղեկավարների համատեղ խորհրդակցություններ՝ տեղեկատվության և փորձի փոխանակման նպատակով:

Փաթեթում առաջարկվող գործողությունները չեն հավակնում ամբողջական լինել և կարող են փոփոխություն կրել, համալրվել կամ կրճատվել՝ ելնելով քննարկումների արդյունքներից: Բացի այդ, աշխատանքների կազմակերպման ընթացքում, ելնելով երկրների առանձնահատկություններից, ինչպես նաև ձեռք բերված և ձեռք բերվող պայմանավորվածություններից, կարող է առաջանալ լրացուցիչ գործողությունների անհրաժեշտություն: